

ՔՆՆԵԳԵՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԵՏԵՆԵԽՕՍՈՒԹԻՒՆ

Առաջնայր «Վ. Ե»-ի ծիծաղը», Թիֆլիս, 1905 թ. դ. 1 ր.

Մեր ընթերցողներին ծանօթ է հեղինակի անունը, որի պատմութեամբով է սկսում և այս համարը: Առանձաբը իր գրական գործունէութիւնը սկսեց և զարգացրեց հէնց այս էջերում. բնականաբար գրել նրա մասին չենք կարող այն գովեստներով, որոնց նա արժանի է: Հինգ տարիների ընթացքում նրա գրած պատմութեամբները այժմ լոյս են տեսնում—ժողովուած մի հատորիկում (200 էրես), ունենալով «յառաջարանի տեղ» Վշտի ծիծաղ փոքրիկ պատմութեամբը...

Լենքթիմուրը գրաւել էր Սերաստիան երկար դիմագրութիւնից յետոյ և փորձում էր ամեն տեսակ դիւային հնարքներով հանգստացնել իր բէնը: Նա վերջ ի վերջոյ այնպիսի դիւային վրիժառութիւններ է հնարում որ բազմաբան ողջ ֆնացածները վշտից և տանջանքներից խելագարւում են և սկսում փողերով և թմբուկներով փողոցներն ընկած երգել, պարել ու խնդալ... «Վշտի ծիծաղ» են իսկապէս Առանձաբի և միւս պատմութեամբները, որոնց մէջ իրական գոյներով են նկարագրւում թիւրքահայկական սոսկալի կացութիւնը: Առանձաբի յուժուրի, ծիծաղի, հեղինութեան տակ զգուար չէ նկատել թագնուած արցունքներ...

Թուղթը և տպագրութիւնը շքեղ են. ցանկալի է որ մեր ընթերցող հասարակութիւնը այս վշտի օրերին «Վշտի ծիծաղով» էլ հետաքրքրուէր. հայութեան վէրքերն ու ցաւերը աշխարհագրական սահմաններ չեն ճանաչում և մեր կովկասահայերիս ներկայ կացութիւնը ջնջեց և այն տարբերութիւնը սահմանի երկու կողմերում որ մի ժամանակ չափազանց մեծ էր համարւում...